ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ municipalityofcharentsavan@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» սեպտեմբերի 2023 թվականի N 1194·

ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԻՐԱՎԱՍՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 01-ի N 68-Ա որոշմամբ հաստատված Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետի, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 26-ին անցկացվելիք երկրորդ նստաշրջանի թիվ 2 նիստին ներկայացվող նախագծերի քննարկման համար սահմանել իրավասու հանձնաժողով.

1.1 ***Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողով՝***

- /Նախագիծ N 78-Ա/
  Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:
- /Նախագիծ N 79-Ա/
  Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:
- /Նախագիծ N 80-Ա/
  Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները վարձակալության ու կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:
- /Նախագիծ N 81-Ա/
  Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող շինության զբաղեցրած հողատարածքներն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
- /Նախագիծ N 82-Ա/
  Քաղաքացուն սեփականության իրավունքով պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ